ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 88 -Ա

« 17 » ՄԱՐՏ 2022Թ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ, 220-րդ հոդվածներով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2022 թվականի մարտի 7-ի թիվ 77-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի խորհրդական Սյուզան Մարգարյանի՝ երեխայի խնամքի արձակուրդի ժամկետի ավարտից հետո աշխատանքի չներկայանալու, աշխատանքային պարտականությունները չկատարելու հանգամանքները ստուգելու, համադրելու և պարզաբանելու նպատակով հարուցել կարգապահական վարույթ:
2. Հաստատել վարույթն անցկացնող աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշման մասին ծանուցել Սյուզան Մարգարյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3/17/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2022թ. մարտի 17-ի թիվ 88-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի խորհրդական Սյուզան Մարգարյանի՝ երեխայի խնամքի արձակուրդի ժամկետի ավարտից հետո աշխատանքի չներկայանալու, աշխատանքային պարտականությունները չկատարելու հանգամանքները ստուգելու, համադրելու և պարզաբանելու նպատակով հարուցված կարգապահական վարույթն անցկացնող աշխատանքային խմբի անհատական կազմը

1. ***Սարգսյան Դավիթ*** *– մարզպետի տեղակալ (խմբի ղեկավար),*
2. ***Արտաշեսյան Մարինե*** *– մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ,*
3. ***Մաղաքյան Նարինե*** *– մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ:*